

Կոմ. չար



ՍՍՀՍԿ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Գերազանցիկ Առաջնորդաց եր Բարեկրօն Քահանայից եւ նոցին խնամոց յանձնեալ Հայ-Ժողովրդեան ի Մեծն Լիբանան եւ ի Սիրիա, Հարազատաց Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, Շնորհմ Սէր եւ Խաղաղութիւն յԱսուծոյ, Օրհնութիւն ի Սրբոյ Աջէն Լուսաւորչին հոգւոց մերոց, եւ Հայրական ողջոյն ի մէջ եւ յԱթոռակցէ մերմէ, ի Տ. Բաբգէն Ս. Կաթողիկոսէ:

Դիտէ՛ք արդէն որ մեր չարաբախտ օրէն ի վեր, Դեկտեմբերի առաջին Կիրակին, որբերու անունով բացառիկ նուէր մը կուսայի՛ք Բարեգործականին, ձեր այդ օրուան հաւելն խնայելով, մասնակից ընելու համար հաշիւնը կոտորածէն որբացածները:

Բարեգործականը իր որբախնամ գործին ամփոփումով, որոշած է այսուհետեւ իր խնամքն ու հոգածութիւնը կեդրոնացնել ձեր զաւակներուն Կրթութեան ու Դաստիարակութեան, եւ վստահելով Հայ-Ժողովուրդի գիտակցութեան եւ գործակցութեան, որբերու Կիրակին սեղ հաստատած է *Մշակոյթի Կրթակիւն* եւ այս առթիւ հանգանակուած նուէրները պիտի յաւկացնէ ուսումնաճարաւ Հայ մանուկներու, ինչպէս երբեմն Միացեալ Ընկերութիւնը կ'ընէր Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ:

Մշակոյթի, Կրթակիւն գերազանց առիթ մըն է որ մեր Սիրելի Ժողովուրդը փառաւոր ապացոյցը՝ այս իր անվերապան կրթասիրութեան եւ ազգասիրութեան:

Քէն ճնշեալական սագնապը այս պահու ծանր կը ննէ՛ւ ամէնուն վրայ, բայց, փա՛նք պարգեւատու Ասուծոյ, հաց մը ունինք. չենք մեռնիր անօրութենէն, մեր բիւրաւոր Սիրելիներուն պէս, որք անապասներուն մէջ խոտարոտ մեռան անբաղ եւ անգերեզման: Ահա այդ չորաբեկ հացէն պատառ մը պիտի սանձ Բարեգործականին՝ *Մշակոյթի Օրը*՝ ի նպաստ մեր զաւակներու կրթութեան:

Մշակոյթի Կրթակիւն ուրեմն, պէ՛տ է ըլլայ Հայ մեքին առողջ պահպանութիւնը եւ զարգացումը խորհրդանշող օր մը, որ բարեդէպ առիթը կ'ընծայէ ձեզի, որպէսզի խանդավառութեամբ Տօնէ՛ք զայն, սալով ձեր լուսնները այդ գեղեցիկ նպատակին:

Բարեգործականը հաստատած է նաեւ *Մշակոյթի Պաշտպան* դրութիւնը: Այսինքն բացառիկ նուիրասրութիւններէ զատ, փափաքողներ կրնան ըլլալ *Մշակոյթի Պաշտպան*, ամէնէն քիչը երեք տարուան համար, կանոնաւորապէս սալով որոշ գումար մը: Այս դրութեամբ ամէն մէկ Հայ՝ աղփասիկ ուսանողի մը պատշապանը եղած պիտի ըլլայ ոեւէ դպրոցի մէջ, որ պիտի հաստատուի Բարեգործականի կողմէն:

Անխտի կը յորդորենք ձեզ, Սիրելի Ժողովուրդ, Եկեղեցական թէ աշխարհական, գործաւոր թէ գործատէր, ուսուցիչ թէ ուսանող, կուսակցական կամ չէզոք, որպէսզի Հայ *Մշակոյթի Կրթակիւն* առթիւ նետէ՛ք ձեր լուսնները Կրթութեան զանձանակին մէջ:

Տա՛նք մեր կարողութեան չափով, տա՛նք մեր գիտակցութեան եւ զգացումներուն ստիճանով, եւ տա՛նք երեսնեական բարձր ըմբռնումով, ըստ պատգամին թէ, Լա՛ւ է տալ քան թէ առնուլ:

Կ'աղօթենք պարգեւատու Ասուծոյ որ Ձեր տուածը հաւիւրներով փոխարինէ:

Ի 24ն Նոյեմբերի 1932 ամի
Ըստ Տոմարի մերում ՌՅՁԲ ամի,
Ի Հայրապետութեան մերում Լ.
Ընդ համարաւ 102.
Տուեալ ի Կաթողիկոսարանիս
Անթիլիաս:

Աղօթաւոր

Մուսկ Բ. Յ. Մանուկ

